Դեսպան Տիգրան Մկրտչյանի դիտարկումները էստոնիայի հեռուստաընկերության եթերում

Ադրբեջանը սպառնացել է հարձակվել Հայաստանի մայրաքաղաք Երևանից ոչ հեռու գտնվող Մեծամորի ատոմակայանի վրա, եթե հայկական հրետանային ուժը հարվածի Ադրբեջանի որևէ ռազմավարական թիրախի: Դեսպան Տիգրան Մկրտչյանը նման սպառնալիքները բացարձակապես անընդունելի է համարում: Նա ընդգծել է, որ Ադրբեջանի նպատակը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ոչ թե խաղաղ ճանապարհով, այլ ուժի միջոցով լուծելն է: Ըստ դեսպանի՝ հակամարտությունը ռազմական լուծում չունի, անհրաժեշտ է վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ:

«Մենք Բաքվում տեղի ունեցած ցույցի ականատես եղանք, որտեղ գոռում էին «մա՛հ հայերին», հնչում էին հայատյաց և հակահայ կոչեր: Դա շատ մտահոգիչ էր, և ցույցը միայն ցրվեց, երբ այն սկսեց հակաիշխանական երանգ ստանալ»,-նշել է Տիգրան Մկրտչյանը:

ՀՀ դեսպանը հիշեցրել է, որ ԵԱՀԿ Մինսկի Խմբի համանախագահները տարիներ շարունակ սեղանին են դնում երկու երկրների միջև խաղաղության հաստատման իր առաջարկությունները: Հայաստանը համաձայնում է այդ առաջարկների հիման վրա առաջ ընթանալ, բայց Ադրբեջանը մինչ օրս անտեսում է դրանք:

Դեսպանը հերքում է շահարկումները, որ Ադրբեջանում հայկական հակամարտության ստվերում Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմն է, որը կարծես նման ստվերային պատերազմ է՝ ինչպիսին Սիրիայում կամ Լիբիայում: Ըստ Մկրտչյանի՝ Ռուսաստանն իրականացնում է միջնորդական առաքելություն և Հայաստանին այս բախումների ընթացքում ռազմական տեխնիկայով կամ որևէ այլ միակողմանի եղանակով չի աջակցել:

Դեսպան Մկրտչյանն անընդունելի է համարում Թուրքիայի պահվածքը:

«Թուրքիան իր աներկբա և բացարձակ աջակցությունն է ցուցաբերել Ադրբեջանին, և նա միջազգային հանրության այն փոքրաթիվ անդամներից մեկն է, որ իրավիճակը լիցքաթափելու և Ադրբեջանին ավելի կառուցողական ու խաղաղ դաշտ բերելու կոչ անելու փոխարեն կրակի վրա յուղ է լցնում: Նման պահվածքը անթույլատրելի է Թուրքիայի՝ իբրև ՆԱՏՕ-ի անդամ երկրի համար»,-հավելել է դեսպանը: